


Հ. Ս. Ս. Է

Rédaction du Journal arménien  
ARCHAEOLOGYE  
(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՄԱՆՔ

ԵՎԻԳՏՈՍ  
Տարեկան դրոշմը 30  
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ  
Տարեկան ֆրանկ 10

Բաժանորդը ՅԱԽԵՆՈՒՄ ԳԵՐՈՒ փոխադրելով  
վճարում է գրքի պիտի բոլորը :

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՆԿԱԽ ՀԱՅԱՐԹԵՐԹ

Չի հրատարակուած ձեռագիրները  
ես չեմ տրուիր :  
Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ  
ծանուցումները կ'ընդունուին մասնա-  
ւոր հստակաշնորհութեամբ :

Թե՛ ԱՐՇԱՆՈՅՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ  
վերաբերեալ ներքակախ խնդրոց համար  
պէտք է դիմել ներքագրութեան հասցեով  
քերթիս Մասնակարարին, որ ե՛

ՓԷՆՈՐԻ ՓՈՓՈՋՈՆԱՆ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանա-  
տու են իրենց գրածներուն :

ZUSE 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԻՒՄ

Հակառակ Օսմ. Սահմանադրու-  
թեան վերահսակումին, հակառակ  
մայրաքաղաքներու և գլխաւոր քա-  
ղաքներու եկեղեցիներու մէջ համ-  
բոյրներու փոխանակութեամբ կ'ըն-  
ուած ազատութեան և հաւատարու-  
թեան ուխտերուն և կատարուած խը-  
րախճանութեանց, հակառակ վեր-  
ջագէտ Օսմ. սահմանադրութեան մե-  
ղի բերած ազատութիւնը գեղեցիկա-  
ձայն ի սփիւռս աշխարհի փողահար-  
ուելուն, դաւաճներէն Խմբագրու-  
թեան հասած թղթակցութիւնները  
միւթարական պարունակութիւն և  
երեւոյթ մը չունին, և բնական էր այս-  
Մէկ կողմանէ գաւառները տի-  
րող կարտուլիան ու չքաւորութիւ-  
նը, միւս կողմէ նախկին ճնշող  
« ուժի մին » քաղցրութիւնները ճա-  
շակած կառավարական պաշտօնեա-  
ներ, և թշուառ ժողովուրդը հարս-  
տահարող էֆէնտիներ և աղաներ մէկ  
օրէն միւսը իրենց վարժութիւնը չ'պի-  
տի կրնային փոխել, և ուրեմն մեր  
զգացած այս ուրախութիւնն ալ լի-  
ակատար չի պիտի լինէր :

Իրաց այս ողբալի կացութեանը  
առջև Խմբագրութիւնն ուրիշ բան չէ  
կարող ընել, բայց եթէ գաւառի  
խեղճ ժողովրդեան ցաւերուն արձա-  
գանքը ըլլալ և անոնց գանգատնե-  
րը մանրամասնօրէն արձանագրել,  
որպէսզի իսկապէս ազատ երկիրնե-  
րու մէջ ազրող Հայերը ծանօթա-  
նան իրենց եղբայրներուն, քոյրե-  
րուն և մայրերուն կրած թշուառու-  
թեանց և ըստ այնմ կարելի դար-  
մաններուն վրայ մտածեն :

Այս ծառայութիւնը անթերի կա-  
րենալ մատուցանելու համար —ինչ  
որ անհուն դժուարութիւններով շըր-  
ջապատուած է — Խմբագրութիւնն  
պէտք տեսած է Արշալոյս ի առաջի-  
կայ ըլնանին, որուն երկու ամիս միայն  
մնացած է, կարեւոր փոփոխութիւն-  
ներ ընել թէ՛ անոր բովանդակու-  
թեան, թէ՛ ծաւալին և թէ՛ ուրիշ  
ինչ ինչ մասերուն և մանաւանդ  
ճրագրին վրայ :

« Արշալոյս » ի Խմբագրութիւնը  
իր այս նպատակը իրագործելու հա-  
մար միջոցներ ձեռք պիտի առնէ,  
նախ նիւթական մասը ապահովելու

և յետոյ իր նոր ճրագիրները կէտ  
առ կէտ գործադրել ձեռնարկելու  
համար :

Ուրախ ենք յայտարարելու որ  
այժմէն իսկ մէկ քանի աշխու անձեր  
արգէն իրենց աշակցութիւնը խոս-  
տացած են, բայց որպէսզի աւելի  
լայն շրջանակի մէջ տարածուի Խմ-  
բագրութեան գործունէութիւնը,  
պէտք է որ ենքնայօժար ձեռնառու-  
թիւններ ալ վայելէ, որուն վրայ  
տարակոյս չունինք թէ՛ լուրջ կեր-  
պով մտածողներ պիտի գտնուին :

Խմբագրութեանն մօտաւոր ապա-  
գայի մէջ ընելիք քայլերու մասին  
առ այժմ այսչափ ծանօթութիւն  
տալէ յետոյ, կը խոստանանք պար-  
բերաբար նշանակել այս էջերուն մէջ  
արդիւնքը մեր ձեռնակներուն :  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՄՈՒՑՈՒԱԾՆԵՐԸ

Բնական էր որ, բանապետական  
ուժի մին տապալումով, անոր ան-  
միջական զոհերէն կենդանի մնացած-  
ները իրենց կապանքներէն արձակ-  
ուէին, անմահ Գողգոթարը ազատ-  
ութիւն չ'ընէր : Անշուշտ, այս բանը մեծ  
յայթութիւն մ'էր Բնութեան, որ  
ինչ որ ալ պատահի, ինչ արդեւք-  
ներ ալ յարուցուին՝ իր ճամբան կը  
չարունակէ դէպի կանխորոշուած  
կէտը, որ է՝ տիեզերական եղբայ-  
րութիւն, ընդ բայրաճակ տիրապե-  
տութեամբ Սիրոյ. ժամանակ՝ զոր  
Մեծ Մարդասէրը և Գերագոյն Յե-  
ղափոխականը կը բնորոշէ « մի հօտ  
և մի հովիւ » այլապէս անմեկնելի  
բառերով :

Յեղափոխութիւնը բնական և  
ընտելիւնը անվերապահօրէն և աս-  
տիճանաբար յառաջդիմական ըլլա-  
լով, մարդոց ձեռքով կատարուած  
իւրաքանչիւր յեղափոխութիւնն ալ  
բարեշրջում (evolution) մը կ'ենթա-  
դրէ :

Արդ, մարդկային բարեշրջումը  
երկու տեսակ է :

Նիւթական և բարոյական :  
Նիւթականը, պէտք է շեշտել՝  
կը կայանայ կենսութիւն և ինչքի ապա-  
հովութեան, գործելու ազատու-  
թեան մէջ, որոնց շնորհիւն է որ  
երկիր մը կը զարգանայ և կը հա-  
րըտանայ : Բայց ապահովութիւն և  
ազատութիւն, եւ գործել անմեղանելի  
և նոյն իսկ փտանդաւոր կըլլան,  
երբ բոլորովին Նիւթական զաս-  
կըցուին :

Ես ազատ եմ՝ զարնելու, դի-  
մացն ալ նմանապէս ազատ է ինք-  
զինքը պաշտպանելու :

Ահաւասիկ երկու ոտիս ազա-  
տութիւններ, որոնց գոնէ մին բըռ-  
նութիւն է աներկբայօրէն : Ի՞նչ ը-  
նելու է այս պարագային :

Հոս պէտք է միջամտէ բարո-  
յական բարեշրջումը : Իրարու մի-  
միմ գործելու. իրարու ունի ինք-  
զինքն պաշտպանելու :

Աւելորդ է երկարաբանել ա-  
պացուցանելու համար թէ՛ ինքնա-  
պաշտպանութիւնը բնական և ընդ-  
դական է. ուրեմն հարկադրապէս  
իրաւացի : Այս հետեւութեան ան-  
միջական հետեւանքն ալ այն է թէ՛  
զարնել անիրաւութիւն և, ուրեմն  
բռնապետական : Իրաւունքը հը-  
զօրագունին է՝ կսկծաւթ բանա-  
ձեւ երբէք տեղ չ'կրնար գտնել ի-  
րաւաստութեան քով : Մէջ բեր-  
ուած օրինակը ամենէն հասարակն է  
և ամենօրեայ : Չարասիրութեան աւե-  
լի տգիտութեան պատճառաւ, իրա-  
րու հարուածներ կուտանք, որոնք  
զէնքէ յառաջ չ'եկած ըլլալով հան-  
դերձ, աւելի փոսակար, աւելի  
անգութ, աւելի՛ մահացու հանգա-  
մանքներով կը ներկայանան խորհո-  
ղին առջև : Կենքի մշտական պայ-  
քարին մէջ Մեծ Մարդկութեան  
սահմաններէն դուրս չ'ելլելու և  
օգտակարապէս գործելու ազատ ըլ-  
լալու համար, անհրաժեշտ է խոր-  
հիջ սորվել ամենէն առաջ. վասնզի  
ինչպէս ամէն ոք գիտէ՝ մէն մի  
ձեռնարկ, իւրաքանչիւր գործ խոր-  
հեղակերպի մը ծնունդն է :

Ուշագիւր ընթացողը անշուշտ  
դիտած է որ՝ մենք խորհիջը նիւ-  
թական բարեշրջում մէջ չ'հաշուե-  
ցինք. վասնզի մենք համամիտ չ'ենք  
անոնց որոնք խորհելու ազատու-  
թիւնը կացութեանց տեսակին կեն-  
թարկեն : Ըստ մեզ խորհել հագե-  
կան ուժ մ'է : Մարդ՝ մի որ և է  
կացութեան մէջ ազատ է իր միտքն  
ու հոգին յառել այս կամ այն բա-  
նին վրայ : Չ'կայ և չ'կրնար ըլլալ  
բռնապետութիւն մը որ մարդու հար-  
կադէ չ'ուզած բանին վրայ խորհե-  
լու : Ուրեմն խորհիջն է միակերպական  
և միակ անբռնաբարելի ազատու-  
թիւնն : Ահա այս անվիճելի ճըշ-  
մարտութեան վրայ յենելով է որ ը-  
սինք թէ՛ օգտակարապէս գործելու  
համար նախ խորհել սորվելու է :  
Ըսել կուզենք՝ նախ հոգին պէտք է  
զատարարակուի : Երբ կը յամառինք  
ըսել թէ՛ մարդ ազատ է, պէտք է  
հասկնանք թէ՛ սղատ է խորհելու  
և ո՛չ թէ գործելու : Նա ա՛յն ա-  
տեն ազատ է գործելու երբ իր ա-  
րարքէն ոչ ոք կը տուժէ թէ՛ նիւ-

թապէս և թէ՛ բարոյապէս : Ի մի  
բան անհրաժեշտ է որ չ'անտեսուի  
արդարութիւնը, հիմնաբար՝ բարո-  
յական բարեշրջումը, առանց որոյ  
ամեն յեղափոխութիւն կըլլայ և կը  
մնայ տեսակ մը բռնապետութիւն :

Յեղափոխութեան մը նպատակը  
պէտք է ըլլայ, ուրեմն, 1. ար-  
դարութեան յաղթութիւնը անցե-  
լոյն զեղծութեան վրայ և 2. ար-  
դարութեան կիրառումը ապագային  
մէջ :

Մեր Օսմանեան (Հայ և Թիւրք)  
յեղափոխութեան յաջող ելքէն ետ-  
քը ներքի է ապագային վրայ յոյս  
մ'ունենալ, բայց վաղուան համար  
գեղեցիկ և վեճ մ'ընդհանրեալ պատ-  
րաստելով հանդերձ, կը կարծեմ  
թէ մեր առաջին գործը ըլլալու էր  
երէկուան անիրաւութիւնները գար-  
մանել, արդարութիւնը իր պատ-  
ուանգանին վրայ վերահաստատել,  
ինչ որ չ'ըլլինք և՛ ըստ երեւոյթին՝  
մտքերնիս անգամ չ'զար ընել :

Մենք, իրաւ, տապալեցինք  
անտանելիօրէն քմահաճ ուժի մը,  
որ —ինչպէս անվիճելիօրէն կը հաս-  
տատէ Պուլկարիօյ և Աւստրիա — Հուն-  
գարիօյ յսխորտանաց գէճ մեր բե-  
րան բանալու անկարողութիւնը —  
քանդեր, կործաներ, մահացուցեր  
է ահապէս և երբեմնի ամենահզօր  
մի կայսրութիւնը : Մենք այս մեծ  
գործը վերջն ի վերջոյ գլուխ հա-  
նցինք և, ինչպէս գրութեանս  
սկիզբն ըսի, այդ ըժժիմին անմի-  
ջական զոհերուն առջև բանտերուն  
գուռները բացինք անոնց տեղը  
տալով իրենց նախկին հայածիչե-  
րուն : Այս աղէկ. բայց արդարու-  
թիւն կը տեսնե՞ք ասոր մէջ. ես,  
իմ մասիս, չեմ տեսներ. և եթէ  
կայ, այնքան հեռու է որ ինծի պէս  
կարծատեսներու համար աննշարե-  
լի մնացած է : Մեր այս յեղաշրջ-  
ումը, թէ և կենքի ամենէն կա-  
րեւոր պայմաններով յիշ, ինծի հա-  
մար ուրիշ բան չէ՛ բայց միայն գա-  
ղափարի կուի մը. խորհելակերպի  
գանաղանութիւն : Հին ըժժիմը  
համոզուած էր թէ՛ այնպէս կառա-  
վարելու էր, մենք անոր հակառա-  
կին համոզուած ենք. եւ եթէ գա-  
ղափարի ազատութիւնն ընդունինք  
այնպէս ինչպէս որ կը յեղեղուի  
հրապարակին վրայ, պիտի հարկա-  
դրուինք խոստովանել թէ՛ մենք  
ալ իրաւունք ունինք, անոնք ալ :  
Այս բացատրութեանէն ետքը, աւե-  
լորդ կ'ըլլայ յամառաբար կրկնել  
թէ՛ արդարութիւնը բարձրացուցած  
կ'ըլլանք մեր համախոհները ապա-  
տելով և մեր հակառակորդները կաշ-  
կանդելով : Իրաւ, մենք մեր տե-  
սութիւնը ընդունել տալու համար

ն'չ հարկեր հազարաւոր անմեղներ կը շարդենք, կը թալլենք և ո'չ ալ շարդելու, թալլելու միտք ունինք, բայց եթէ այս տարբերութիւնն ալ չ'ըլլար մեր և անոնց մէջ, այն ատեն... այն ատեն պիտի մաղթէի որ երկիրը բացուէր՝ մեզ ամենքս ալ կուլ տալու համար:

Ուր են հին ընթացիկն ու ժողքադարձանութիւնն՝ դուրս ամեն տեսակ չարագործութիւններու զըրպարութեամբ բանտուածները, այսինչ այն ինչ վալիին, միւթէսարըֆին, գայմազաւին ցանկութեանց, զոչաքարութեանց իրենց սիրելիները իրենց ունեցածը չ'յանձնելուն համար չըթայուածները և ըն: Միթէ այս անմեղ դժբաղդներն ալ լոյս արև տեսնելու չ'էին Սահմանադրութեան չնորհիւ: Պէտք է զանոնք մոռնալ վասնզի բունապետութեան հակառակորդ չ'են հանդիսացած: Երբ կառավարիչներ և դատաւորներ պաշտօնանկ կ'ընենք և կը պատժենք իրեն պաշտօնագեղձ, ինչպէս կ'ըլլայ որ անոնց վճիռով չորս պատի մէջ նետուածները կը շարունակենք իրեն յանցապարտ նրկատել: Որովհետև քաղաքական յանցաւորները բաշա, պէյ, հեղինակ, հրապարակագիր կամ առնրուապն իրեն յեղափոխական կուսակցութեան մը պատկանող, ծանօթ անձնաւորութիւններ, մինչդեռ միւսները առ հասարակ գիւղացի և կուսակարական ձևին ու տեսակին անտարբեր ըլլալուն համար միմիայն առաջիններուն վիճակով շահագրգռուելու էինք, մենք ալ մեր կարգին՝ ՀԱՒԱՍՍՐՈՒԹԻՒՆ բառին իմաստը մոռնալով: Անշուշտ բանտերը միմիայն անմեղներով լեցուած չ'են, բայց միթէ բարոյական բարեշրջումը՝ արդարութիւնը՝ մեր վրայ պարտք չ'ընէր յանցապարտ անպարտէն զատել և իւրաքանչիւրին տալ զարժանն:

Այս խեղճներուն և իրենց պարագայից համար, որոնք տակաւին կը հեծեն, կառավարութիւն մը ինչ ձևի տակ ալ ըլլայ՝ կրնա՞յ բռնապետական, քմահաճոյական չ'ըլլալ: Թո՞ղ չ'առարկուի թէ՛ հիմայ, չնորհիւ Սահմանադրութեան, դատարանները բարեկարգուած ըլլալով, ամեն բանտարկուած նոյն իսկ ամենայնպէս կրնայ իր ձայնը լսելի ընել տալ: Ահա մեր պատասխանը: Դանաւանդ ներքնագաւառները դատարանները տակաւին զլայապէս հեռացած չ'են հին անաւեր դրութիւնէն, և նոյն իսկ եթէ բարեկարգուած ալ ըլլան, կեանքի մէջ կան պարագաներ, յորում ոչ թէ ամենայնպէս նոյն իսկ ամենէն առաջինը չ'կրնար քայլ մ'առնել ինքնաբերաբար: Օսմանեան կայսրութիւնը վերակենդանացնողներուն և անոնց համախոհներուն, այսինքն՝ ամբողջ Օսմանցիութեան անկէ անիրաւուածներուն շրջութաները կուտրել:

Ինչ մեղքս պահեմ. երբ Սահմանադրութեան հրատարակումին խեղճները անպահուն Կ. Պոլսոյ և Իզմիրի բանտերուն դուռները խորտակուեցան ժողովուրդին յարձակումէն, ես ուրախացայ՝ խորհելով թէ այդ կերպով արձակուած մէկ երկու հազար հասարակ շարագործներուն մէջ առ նուազն քսան հատ անմեղներ կը գտնուէին, որոնք իրենց ընտանեաց գիրքը կը սլանալին Ալլահ բէնսիւր իւտ տիւսթուր (Աստուած օրէնքը յողթական ընէ) աղաղակին մէջ, իրենք ալ՝ իրենց կարգին՝ երբեմնի հանրածանօթ մաղթանքը բարեջրելով:

Բանտել, կախել, գլխատել նէնէական ունակամուրութիւններ են

և բարբարոսական արտայայտութիւններ: Մենք ճշմարտապէս յառաջդիմական պէտք է ըլլանք: Սահմանադրութիւնը ամեն դասակարգէն օրհնել տալ, հոն է ինչիւրը: Հոգին կրթել որպէսզի մարդն աղնուանայ, հոն է կենսականը. ահա իրական և տեական բարեշրջումը:

Ո՛չ թէ նմանողութեամբ այլ արդարասիրութեամբ և իրաւարարութեամբ, գիտէ՞ք, որքան պիտի դերազանցենք բունապետութեան սողունները: Այդ ճահճաբանի գորտերուն քով մենք այնքան մարտիւններ պիտի ըլլանք: Եւ այն ատեն միթէ չ'է՞ք հաւատար որ անոնք ալ՝ այդ գետնաքարը մեր նմանները՝ մեզ շրջապատող լոյսէն շլանալով մեր քով պիտի սլանան մագնիսացուցիչ անդիմադրելի զօրութեան մը մղուած:

Փոքրածաւալ թերթի մը նեղ շրջափակին մէջ ինծի դժուար է աւելի ընդարձակել ազգերու ինքնապահպանումին անհրաժեշտ եղող կարևոր խնդիրներէն մին: Բայց կը յուսամ թէ ինքնակոչաբար կամ իրական արժանիքով գործի գլուխ գտնուողները կը հասկնան թէ ինչ ըսել կուրծմ երբ կը գոչեմ: Մոռցուածները չ'մոռնանք...:

Ա. ՊԱԼԵԱՆ

ՆԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենապատիւ Տ. Տ. Մատթէոս Ս. Արքեպիսկոպոսի Իզմիրեան Եպիսկոպոսի Գրեմ

Բարձրաշնորհ Տ. Եղիշէ Ս. Եպիսկոպոսի Դուրեան, իրենց Լուսատիպ պատկերէնքով:

Սիմոն Գաբամանեան

Սոյն տետրէն ունենանաւոր համար պէտք է դիմել Տ. Օ. Խնտամանի, Պուլազ Հայոց վարժարանը:

Գին երկու Դահեկ. ողջ

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՄԸ ԵՒ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Հ. Բ. Ը. Միութեան նկատմամբ տուած յողուածաշարքը շատ մը հետաքրքրութիւններ լարած է:

Արդէն այս արդիւնքը ձեռք բերելուս վրայ տարակոյս չունէի, երբ այդ ամենակարևոր հաստատութիւնը իմ բոլոր ուշադրութիւնս գըրաւեց քանի մը ամիսներ առաջ, ու անոր մասին սկսայ ծանօթութիւններ տալ «Արշալոյս» ի ընթացիկներուն:

Միութեան մասին զանազան տեղերէ ինծի եղած մասնակի հարցումներուն բոլորին ալ մասնաւոր նամակներով գոհացում տուած եմ իմ պաշտօնէս դուրս բացաւիկ աշխատութիւն մը՝ որուն համար ապահով եմ թէ՛ չ'պիտի զղջամ, քանի որ Ընկերութիւնը առաւել կամ նուազ պիտի օգտուի անկէ:

Ասկէ առաջ ըսած եմ որ Միութեան շահերուն հետ յորաբերութիւն ունեցող հարցերու մէջ անվերապահօր պիտի ըլլամ, եթէ իմ այդ համարձակութիւնս ինծի դէմ նոր հակառակորդներ ալ յարուցանէ:

Արդէն ինձ համար եթէ կայ բան մը որ հետաքրքրական ըլլալէ դադարած է այլևս, իմ հին և նոր հակառակորդներս՝ և անոնց կողմէ ինծի ո՛ր և է կերպով քննաւոր համար եղած ջանքերն ու դաւադրութիւններն են:

Այս մտածումէն թելադրուած հրատարակութեան կուտամ խարթուածէն (Սուտան) վերջերս ինծի ուղղուած նամակ մը, որ Հ. Բ. Ը. Միութեան գործերը կը շոշափէ:

Ահա այդ նամակը նոյնութեամբ:

Տիար Եղիշէ Թորոսեան  
Քարաուզար-Ներկայացուցիչ  
Արշալոյս ազգօգուտ Շաբաթաթերթի  
Խմբագրութեան

Ի Գահիրէ  
«Ձեր թիւ 511-39 Շաբաթաթերթին մէջ Հ. Բ. Ը. Միութեան նուիրուած «Արդիւն» վերնագրով յողուածին մէջ յիշած էիք Ընկերութեան ունեցած ընդհանուր անգամներուն թիւը՝ քաղաքներուն անուններովը՝ մինչև Հնդկաստան եւ Հապէշիսթան, ու կը գործանամ թէ ինչպէս եղած է որ անորին Սուտանը մոռցած էիք:»

«Ասկէ գրեթէ տարի մը առաջ հոս ինձ ներկայացուցին ցուցակ մը, որ կը կրէր Հ. Բ. Ը. Միութեան վերնագիրը. ուրախութեամբ արձանագրուեցայ եւ նկատեցի թէ՛նք քսան եւ մէկերորդ թիւըն էի արձանագրուողներէն: Հարցուցի թէ ե՞րբ պիտի վճարենք, որուն պատասխանուեցաւ թէ՛ մէկ ամիսէն ըստացականները կուգան, այն ժամանակ կը վճարէք: Այժմ մէկ ամիսը տարուան կը մօտենայ կոր, եւ ոչ ոք ներկայացաւ. մասնաւոր քանի մը անգամներ ծանօթ բարեկամներուս ալ հարցուցի, պատասխանը «զեռ ընկալագիրները չ'եկան» եղաւ:

«Ուստի կը ինչդրեմ ձեզմէ որ մեզի իմացնէք թէ՛ այդ ցուցակը որ հոս (Սուտան) ստորագրուեցան, ատ տեղը հասա՞ւ թէ «միտեր ալթի» ըրին:

«Եւ որովհետև դուք ի բոլոր սըրաւէ փարած էք Հ. Բ. Ը. Միութեան, կը յուսամ ձեռնէ տեղեկութիւն ստանալ «Կանխագոյն շնորհակալեօք մնամ»

Սորին յարգանք  
ԿԱՐԱՊԵՏ ՕԶԱՆԵԱՆ  
Խարթում 15 Հոկտ. 908

ՊԱՏԱՍԻԱՆ

«Արդիւն» վերնագրով հատուածը երկու մասի բաժնուած էր և ձեր կարգացածը Ա. տարւոյ տեղեկագրոյն մեայն կը պատկանէր, Սուտանի մասը Բ. տարւոյ Տեղեկագրին մէջ նշանակուած էր և հետեւաբար Արդիւնի երկրորդ մասը կը կազմէր. (տե՛ս «Արշալոյս» թիւ 512-40) ուր նշանակուած է Սուտանի համար 24 անդամներ, հետեւաբար «ահագին Սուտանը» մոռցուած չէ, Տ. Կարապետ Օճանեան:

Իմ քաղած «ստոյգ» տեղեկութեանց համաձայն, անհոգութիւնը Ընկերութեան կողմէ եղած չէ: Ձեր արձանագրած մուտքի գումարը 20 և ամսավճար 10 դահեկանի ստացականները տարւոյս մայիս 8 թուականու ղրկուած են Տիար Կիւլպէնկ Խանճեանի (Օմուրուման) ինչպէս նաև վերջերս Հոկտ. 16 թուականու ֆիացեալ ստացագրերն ալ ղրկուած են միևնոյն հասցէին: Հետեւաբար ձեզ համար 110 դահեկանի ստացական ղրկուած է: Նոյնը տեղի ունեցած է

նաև միւս բաժանորդաց: Իսկ ձեր բոլորին ալ անունները Բ. տարւոյ տեղեկագրին մէջ արձանագրուած են, և անկէ մէկ մէկ օրինակ ձեզի ղրկուած, որ ինչպէս կերևայ՝ տակաւին ստացած չէք:

Սոյն տեղեկութիւնները անպաշտօն բայց ամենաստոյգ աղբիւրներէ քաղած ըլլալուս ի հաստատութիւն կ'ստորագրեմ, Ձեր Սուտանցիներուն ալ իմ բարեկներս ղրկելով:

Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

Յ. Գ. Եթէ Տիար Խանճեանի կողմէ զբաղմանը կամ հեռաւորութեան պատճառաւ փոքրիկ անհոգութիւն մը եղած է, Ձեր բաժնեգրինը կրնաք բոսթով կամ Ն. Վ. Պողոս բաշայի Տայրէի Տնօրէնութեան հասցէին՝ որովհետև Գանձապետը Ազն. Առաքել պէյ Նուպարն է, կամ Վարչութեան Դեր - Ատենապետ Վսեմ. Երուսիմ Աղաթօն պէյի ղրկել, որովհետև Ատենապետը Տօքթ. Տաղաւարեան բացակայ է առ այժմ:

ՆՈՅՆ

ՆԱՄԱԿ ԱՐԱՔԻՒՐԵՆ

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Արարկիր լուսնբու և ձորբու մէջ շինուած քաղաք մը ըլլալուն համար միշտ արտաքին օգնութեանց պէտք ունի, եւ երբ շրջակայքը եղած հունձքը նուազ ըլլայ, Արարկիրի ժողովուրդը մեծ անձկութեան մէջ կ'իյնայ: Երկու տարի է վեր է որ շրջակայից հունձքը նուազ է, այս պատճառաւ այժմ ժողովուրդը մեծ նեղութեան մէջ է: Անոցիտ տարի ցորենը այսչափ սուղ չէր, ոմանք անօթութեան մեծան եւ ոմանք ալ կաթուածահար եղան: Այս տարի աւելի կը վախցուի, որովհետև ցորենի գինը օրստօրէ կը բարձրանայ եւ հայթայթելու մեղցոնները պակաս են: Անցեալ տարի շատեր անօթութեան պատճառաւ, իրենց կարգերը (օղ, քէմէր, հանդիւրեղէն) ծախեցին եւ կամ հացագործներու քով դրաւ գրին ու մինչև այսօր անոնց քով կը մնայ, չեմ գիտեր այս տարի ժողովուրդը ինչ պիտի ընէ: Տէր ինքը սղորմի, Իրաւ որ ժողովուրդին ներկայ կացութիւնը ցաւալի է:

Արարկիրի ժողովուրդին թշուառութեան պատճառները այլապէս են: Անոնց մի քանի հատը համառօտակի յիշեմ:

Առաջին, մէյժը արտաքին ճնշումները, զրկողութիւնները եւ բնաբարութիւնները, ժողովուրդը այս թշուառ կացութեան մատնեցին: Մասնաւոր 1905ի աղէտալի դէպքը:

Երկրորդ, այս բնաբարութեանց պատճառաւ հարուստ եւ կարող դասակարգին օտար երկիրներ գաղթումը, որով դրամազլխին պակասելով ժողովուրդէն շատերը անգործութեան մատնեց և կամ գործ գինի անկման: Արարկիրի ժողովուրդը մասնաւորապէս թշուառութեան կ'ընթացի եւ դրամատէրներու շատ պէտք ունի:

Երրորդ, Երջակայից սղութեան պատճառաւ գործերու դադարումը, առևտուրի դադարումը ժողովուրդը վերջին ծայր աղքատութեան դատապարտեց: Արարկիրի ժողովուրդը ինքնին ճարպիկ, շարքայ եւ աշխատասէր ժողովուրդ մըն է. եթէ գործ ըլլայ՝ այս ժողովուրդը անօթի չի մնար, գիշերը ցերեկին կը խառնէ եւ իր օրապահիկը կը հանէ. ցաւալին այն է որ գործ չկայ եւ եթէ կայ ան ալ շատ սուղ է, հազիւ

չոր հացի մը փարայ կրնայ հանել : Իբրև պաշտօնեայ երբ տուները կ'այցելեմ, միշտ զէմս աղքատներ, նիհար ու գաղկացած զէմքեր կը տեսեմ որ անօթութենէ նուազելու վրայ են : Այս ըսածներս հաստատելու համար միջազգայ մը պատմեմ :

Այս Գարուն Մէզրէի Որբախնամներէն մին Արաբկիրի այցելութեան եկաւ պատահմամբ մեր տունը հիւր եղաւ : Զորոյց մը ելաւ թէ, « այդ որբախնամը որբ կը հաւաքէ » : Մէջմըն ալ տեսնեմ որ 150-200 որբ մեր տունը հաւաքուեցան, որոնցմէ ոմանք հայր մայր ունէին անօթութեան պատճառաւ սիրալոյսով իրենց զաւակները տալու պատրաստ էին : Գրեթէ ամէնն ալ առանց բացառութեան նիհար, մաշած գունատ եւ հազիւ բազկերակը կը զարնէր : Ոմանք հարցաքննելով տեսանք թէ խոտ կերած են եւ եթէ, այս տարի տեղէ մը օգնութիւն չկայ, կը խորհին թէ այս ժողովուրդէն շատեր սովամահ պիտի ըլլան : Ազգատութեանը հիմակունքն ըսկած է եւ շատ պատուաւոր սեպուած ընտանիքներ զոնէ գուռ կը մուրան :

Այս Գարունը անօթութեան պատճառաւ հասարակ ժողովուրդը 3 օր կառավարութեան դուռը հաւաքուեցաւ, ժողովուրդին գոհացում չտրուելուն համար հասարակ խումբներ վազեց հրապարակի ցորենի ամբարի մը վրայ եւ կողոպտեց, այդ պատճառաւ այսօր շատ մը Գրիստոնեաներ բանտերուն մէջ կը առապին : Կը վախնանք թէ այս տարի աւելի գէշ բաներ պիտի պատահին եթէ հիմակունքն առջեւը չառնուի : Կան որոյ մեր Հայ եղբայրներուն գթութեան զիմում կ'ընենք, մասնաւորապէս այդ տեղ գտնուող Հայրենակից եղբայրներուն որ այս սովելոց օգնութեան փութան, գիտնալով որ « ով որ աղքատին կ'ողորմի Տէրով փոխ կուտայ » :

Ահաւասիկ երկինքը գանձ զիզելու պատենութիւն մը պատենութեան օգուտ քաղեցէք, Մեր Փրկիչը ըսած է, « Աւելի երանելի է տալը, քան թէ առնելը » : Առնելու ճամբան տալն է, արդէն շատեր այս ճամբարութիւն փորձառութեամբ գիտեն : « Տուէք ու պիտի տրուի, կոխուած եւ ցնցուած լեփեցուն փորցեցէք ու տեսէք կ'ընէ Մարգարէն : Չեմ ուզեր խօսքերս երկարել : միևնոյն մեր Հայ եղբայրներուն գթութեան զիմում կ'ընեմ : Ի սէրն Գրիստոսի օգնութեան փութացէք :

Մնամ եւ այլն  
ՍԱՐԳԻՍ Մ. ԳՐԱԼԵԱՆ  
(ԵՐԷՑ ԱՐԱՅԿԻՐԻ)

Ն Ա Մ Ա Կ Գ Ա Հ Ի Ր Է Է Ն

ԹԻԻՐԻՍԱՑՈՒԹԻԻՆ ՍԸ

Պատ. Խմբագրութիւն  
Արշալոյս ազգօգուտ թերթի

ի Բաղադրիս  
8)21 Հոկտ. 908 եւ թիւ 513 թերթի նամակատուփի բաժնին մէջ կարգացի ձեր այն տողերը, որով Արաբկիրի սովելոց հանգանակութեան արդիւնաւորութիւնը միմիայն ինձ կը վերադրէիք :

Թիւրիմացութիւն մը նշմարելով հոն, հրապարակաւ կուգամ յայտնել թէ Մասնախմբիս յարգելի ընկերներն ալ աւելի յոգնութիւն կրեցին ու չի խնայելով ամէն ջանք աշխատեցան արդիւնաւորելու մեր ձեռնարկը :

Միևնոյն ատեն ցաւալի է ըսել որ հանգանակութիւնն արդիւնաւոր ըլլալէ բոլորովին հեռի է ի շնորհս մեր հարուստ հայրենակիցներու, որոնք, քիչ բացառութեամբ՝ իրենց զօրքի վերաբերումով վերջին ծայր ժխտներ հանդիսացան, բազդատմամբ աշխատուող դասակարգին : անոնց մէջ գրտնըուեցան շատեր, որ « մենք սա՛ չափ զբաժ ճամբած ենք եւ այլն » ըսելով, անգամ մը մեզ իրենց զէմէն հեռացընելու ճիգերը թափեցին :

Գանուեցան Թովալ սիրտեր ալ, որոնք ազնուութիւնը ( ) ունեցան ըսելու : « Թո՛ղ հարիւր հողի ալ մեռնին, ինչ կայ եզեր. թող երթան... սեթիւն ընեն ու սպրին եւ այլն » :

Ամօթ այսպիսիներուն...  
Գահիրէ 24 Հոկտ. 908  
ԳԵՌՐԳ Մ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ զիմել Թերթիս Խմբագրութեան հասցէին :

Ա.Չ.Գ.Ա.ՅԻՆ  
ԼՈՐԵՐ

ՍՂՈՒԹԻՒՆԸ

Նախորդ թուով խոստացած էինք Արաբկիրի Առաջնորդական Տեղապահ Գերապ. Տ. Մերուժանի վրդ. Աշխարհունիի պատասխանագրէն բազում մը ընել տեղոյն մէջ տիրող թշուառութեան ծանօթացնելու համար մեր ազգայինները :

Ն. Գերապատուութիւնը կարգ մը անձնական խնդիրներու վրայ ծանօթութիւններ տալէ յետոյ, կ'աւելցնէ :

Աւարտիս եմ յայտնելու նոյնպէս թէ՛ տեղոյս թշուառութիւնները լաւ կերպով պատկերացուցած էիք : Յորենին թիմինը հիմայ 33-35 զրշ. է (18 օխա) մինչև Մարտ բաւելու ցորեն չունինք քաղաքիս մէջ և շըրջականերու. վախ կայ թէ մինչև 50 պիտի բարձրանայ. ո՛րչափ տարբերութիւն 14 ին և 50 ին մէջ : Անցեալ տարի շատեր յուղիւնին ու զարգերին ծախելով ապրեցան և նորէն 1-200 տուն աղքատ նպաստի կարօտներ ունէինք, որոնց մէկ երկու անգամ հաց բաշխեցինք : Այս տարի 3-400 ի բարձրացած պիտի տեսնենք : Անցեալ օր մահ մը պատահած էր, որուն համար կ'ըլլուի թէ՛ երկու օր անօթի մնալէ յետոյ, երբ գրացիներէ զրկուած խաղողը առատութեամբ կուտէ, կը փաստի առկէց. բնականաբար անօթին դոտածը պիտի ուտէր... Առայժմ մտահոգութեան մէջ ենք. ձմեռը պիտի նեղուինք, ո՛ր էր ինք թէ 4-500 օսմ. սակի ցորեն կարենայինք ամբարել քանի չէ սղած. վերջը նպաստ ալ չենք կրնար բաւելցնել : Անցեալ օրեր 22 լիւրայ Ազն. Պետրոս էֆ. Կարապետեանէ և 54 սակի և 85 զրշ. Պատրիարքարանի միջոցաւ տեղոյդ հանգանակութեանէն հասաւ մեզի, որոնցմով կուզենք ցորեն բերել տալ Տիրապէքիդէն, բայց ատով ինչ չափով կրնանք սփոփել տիրող ահաւոր թշուառութիւնը եւն եւն » :

Նոյնիմաստ յայտարարութիւններ կ'ընէ Արաբկիրի բողոքական Հայոց երէցը Արժ. Ս. Մ. Գրալեան, որուն նամակը ամբողջութեամբ հրատարակութեան տրուեցաւ պայտուան թուով : Թէ՛ տեղոյս թէ՛ արտասահմանի Արաբկերցիներուն կիկնայ իրաց այս տխուր կացութեան զարմանին վրայ լուրջ կերպով մտածել :

ԳՈՂՈՒԹԻՒՆ  
Տակաւին Օսմ. Սահմանագրութեան գործալի հռչակումէն և եղբայրայրութեան զգացումները վերանորոգուելէն յետոյ ալ իրարու վընասելու դիտումէն հրատարակ չենք ուղեր եղեր. ցաւալի է... :

Մեզի լուր կը տրուի թէ՛ Ֆիշնէի մէջ հայ մը՝ Սեդրաք Տէօվլէթեան անունով ուրիշ հայու մը փնտաւելու համար, քանի մը տեղացիներու հետ միացած այս վերջնոյն տունը կողոպտել կուտայ, և կառավարութիւնը կը միջամտէ ու գողութիւնը կը հաստատուի... :

ԱԶԳ. ԺՈՂՈՎՆԵՐ

Պօլսոյ թերթերը կը ծանուցանեն թէ՛ Կեղրոնին Երեսի. Ժողովոյ ընտրութիւնը կատարուած է և քուէից առաւելութեամբ ընտրուած են 20 եկեղեցական անդամներ Պօլսոյ գտնուողներէն, իսկ աշխարհական երեսփոխաններէն, բայցի մէկ քանի վիճակներէ, մնացեալներուն ընտրութիւնն ալ կատարուած է և երկիցս գումարում ալ տեղի ունեւորեցած :

Վերջին նիստին մէջ, Երեսփոխանութիւնը իր Գիւանին, ինչպէս նաև Բաղադրական և Կրօնական Ժողովոց կաթողիկոսական պատգամաւորի ընտրութեամբ զբաղած է :

ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ  
Յառաջիկայ Շաբաթ օր՝ 31 Հոկ. 908 երկույեան ժամը ճիշտ 9ին, Լսարան-Ընթերցատան մէջ ի Թէվֆիդիլէ տեղի պիտի ունենայ նուագահանդէս մը, ուր անուանի դաշնակահար Տիւր Յակոբ Ս. Մեղիքեան պիտի նուագէ տաճկական ամենաընտիր Շարգիներ և Հայկական զանազան երգեր :

Յարգելի հասարակութիւնը կը հիտիբիտի ներկայ գտնուիլ այս նուագահանդէսին, ուր հիմուտ արուեստագէտը պիտի կրնայ հաճոյալից ժամանց մը առթել ամենուն և զո՞նցնել մասնաւոր երաժշտութեան սիրահարները :

ՊՅՅԳՐՈՒԹ

Հետեւեալ նամակը ի հրատարակութիւնը զրկուած է մեզի :  
Խմբագրութիւն «Արշալոյս» ի Այս քանի մը օրերուն մէջ հրատարակութիւններ եղան, որոնցմով կըզգուցանեն ժողովուրդը, որպէսզի քանի մը Աւստրիական վաճառատուներու հետ իրենց առեւտուրը դադարեցնեն : Այդ յայտարարութեանց մէջ յիշատակուած է նաև « Սինկերի կարի Մեքենաները » :

Ճշմարիտ է որ հրատարակութեանց ազգանուէր հեղինակներն ուզած են ակնարկել արտասահմանեան քանի մը գործարաններ, որոնք Սինկերի անունի տակ եւ սիսթէմով վաճառուեան կ'ընեն : Սակայն ոչ ոք կանգիտանայ թէ՛

այս երկրին մէջ մեր ներածած մեքենաները սեփականութիւնն են « THE SINGER MANUFACTURING Co DE NEW YORK » ի. զորս Գիւլպօվիէն (Մեծըն բրիտանիոյ Սկոթլանդի) կը հասնին մեզի :


Արեւելքի բոլոր երկրներուն մէջ Սինկերի ընկերութիւնը յարգանաց եւ երախտագիտութեան իրաւունք վատուած է, որովհետեւ իր մեքենաներուն շնորհիւ շատ մը անձանք տեղեր քաղաքակրթութեան այնպիսի զարկ մը տուած է որ՝ ուրիշ ո՛ր եւ է Եւրոպացի տակաւին մտածած իսկ չէ նոյն իսկ այդ տեղերը ոտք դնել :

Անոր շնորհիւ է որ պոստընները մուտ գտած են ամենուրեք եւ կը մըրցին եւրոպական ամենաընտիր սեղանագործներու հետ : Անիկա է որ շատ զժառոգ չբաւորներու զիւրիս ապրուստ հայթայթելու միջոց եղած է :

Կը խնդրենք ուրեմն Եզրպատանակ ժողովուրդէն, որ արդէն զէպի մեր վաճառատունը միշտ համակրանքով վերաբերուած է, բարեհաճի գտնազանութիւն գնել կարի մեքենաներու ճըմարիտ Սինկերի եւ Աւստրիական ապրանքներու մէջ, որոնք յանուն Սինկերի՝ մեքենաներ վաճառելու նոյն իսկ համարձակութիւնը կ'ունենան :

Մեր յատկանիշը ի ստորեւ կը ճըրատարակենք. Սինկերի կեղծերէն ըզգուշանալու խնդրանք :

Հաճեցէք ընգունիլ եւ այլն :  
Սինկերի Ընկերութեան համար  
Ս. ԱՊՐԱՎԱՆԷԼ



Յ Ա Պ Ա Ղ Ո Ւ Մ

Այս անգամ թերթին 1-2 օր յապաղման դատճառը մամուլի գործաւորներուն Պայրամի առթիւ բացակայութիւնը եղաւ :

Ն Ա Մ Ա Կ Պ Է Յ Ր Ո Ւ Թ Է Ն

ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՆԱԻԸ Ի ՊԷՅՐՈՒԹ

Արշալոյսը նոր սկսած է բացուիլ, կիզիչ արեգը՝ իր սեկեճածանչ ճառագայթները՝ սփռած էր մայր ընտելեան վրայ, ամէն կողմ խոր լրութիւն կը տիրէր. միայն կատաղի ծոփը էր որ իր լեռանման ալիքները՝ վէս ժայռերու զարնելով տահգին ալմուկ մը կը հանէր. թեթեւ տերեւի նման այս ու այն կողմ կը տատարուէր Աւստրիական այն հզոր նաւը՝ որ քաղաքը կը ճեղքեր ու կ'անցնէր այդ լեռանման ալիքները՝ քանի որ ալիքները կը բարձրացնէին իրենց օճապտոյտ հոսանքները, նաւը կը բազմապատկէր իր կորովը՝ միշտ գէպի յառաջ սլանալով :

Կամաց կամաց նաւը նաւահանգիստ հասաւ, ահագին երկաթը ծո-

ԵՂԻՇԷ ՓԱՄՊՈՒՔՃԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՑ ԷՒ ԱԶԻՉ ԳՐԱՎՈՂՈՒՆ ԴԻՄՍՑ

Միակ ներկայացուցիչն է Ազգային Հիւանդանոցի Սիկարի թղթերուն, կը վաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ :

1909 տարւոյ պատի և զբպանի օրացոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը զիմելու է, և կամ զիւրութեան համար «Արշալոյս» Տպարանը :

# ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԽԱԽՈՏԻ

## ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



# ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆՇԸ ԻՐԵՆՅ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է :

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վախելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամավաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնին :

Պարսկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալի է :

Մեր վաճառատունը վերջապէս, գիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

վր նետեց եւ կը ջանար իր նուազած ուժերը վերաբերել :

Տեսարանը՝ ուրախալի էր, պղտիկ նաւակները՝ կարապետներ նման շարունակ կը թռչտէին սոյն հսկայ նաւի բոլորտիքը՝ բայց ինչ պատճառաւ այդ բոլորիս անձանթ էր :

Մէյնն ալ լսուեցաւ ժողովրդի աղաղակը՝ նա կը ջանար ետ դարձունել նաւը՝ որի մէջ կը գտնուէր տեղիս վաճառականներէ ապրանքները, միայն Օսմ. փոստան ընդունուեցաւ և արար ժողովուրդը գրկելով ջերմ համբոյր կը տեղար Օսմանեան կնիքներին : Ընդունուեցաւ նաեւ Փրանսական փոստան, բայց նորէն բաւական կորուստ մը տուաւ, իսկ Աւստրիական փոստան նաէն անգամ չ'հասնուեցաւ :

Ժողովուրդը՝ կը կանչէր, գնա՛ հեռացի՛ր ասկէ. պէտք չունինք ձեր ապրանքներէն, և ձեր երեսն անգամ տեսնել չենք ուզեր :

Նաւավորը չ'ընտելու կրել այսքան նախատինք, զի կը դիպի Եգիպտոս դարձուց, և պիտի շարունակէր իր ճամբան եթէ հմուտ կուսակալի կողմէն չի կանչուէր :

Նաւը՝ կրկին նաւահանգիստ մը տուաւ բայց այս անգամ գործը կանոնաւորուեցաւ. կուսակալն զորաց հրամանատարն իրեն հետ առնելով նաւը՝ գնաց, իսկ քարափը պաշտպանուած էր ժողովուրդէն. զօրքերը՝ շարունակ կը հսկէին այս արիւննարու մարդիկ, որք մեռնելն անգամ յանցն առած էին, եթէ երբէք իրենց կամբը չըլլար :

Նաւը մէջ կը գտնուէր Աւստրիական Հիւպատոս մ'ալ որ երկիրս այցելելու կ'ուզար, դեսպանը ծովափ կայնած կը գիտէր, վախէն լառ մը չէր կրնար բերնէն հանել :

Կուսակալը նաւը մնաց մինչև ժամ երկուք. մէյնն ալ տեսնուեցաւ նրանց գալը՝ ժողովուրդը ըսկսաւ կատողել, որովհետև իրեն հետ կը բերէր Հիւպատոսը՝ և փոստայի կարեւոր նամակները. թէև ժողովուրդը կը ցանկար նաւակն իսկ խորատու գել բայց վեհ զինուորականները՝ շարունակ զանոնք կը դիմադրէին, մինչև իսկ լսուեցաւ այս խօսքը՝ « մենք 2000ի չափ զօրք ենք իսկ գուք մենէ շատ. եթէ երբէք շարունակէք ձեր այս անվայել շարժումը վրտաճ եղբք թէ բոլորնիդ ալ սրէ կ'անցունենք » :

Նաւակը կը շարունակէր իր ճամբան, նրան կը հետեւէին վաճառականների ապրանքները՝ և ճամբորդները՝ որ մինչև այն ատեն նաւի մէջ

կայաւէին, զի չէին կրնար մեկնել. նաւակը հասաւ նախ կուսակալը ելաւ, յետոյ Հիւպատոսը իւք զօրաց հրամանատարը հոն փոստան կայաւէր, քանի մը իմաստակներ աշխատեցան փոստան կրկին ծով նետել բայց կուսակալը հասնելով՝ գրկեց զայն, միայն պղտիկ պարկ մը կրցան նետել բայց իսկայն զայն ալ հանել տուաւ :

Չմոռնա՛մ ըսելու թէ՛ հոս այս շարժումները կատարուած ժամուն՝ կուսակալը վրայ տուաւ իր ֆէտը՝ խուժանը կը ցանկար զանոնք կասեցնել, հեծրազօր պահակները կը հսկէին հրամանատարներու վրայ, ու միշտ պատրաստ կատարել ջանաց հրամանը, կուսակալը իսկայն կառքը մտաւ առնելով իրեն հետ Հիւպատոսը և փոստան :

Թէև ժողովուրդը աշխատեցաւ կանգնեցնել, բայց նա քաջաբար հրամայեց կառապանին որ մտրակէ իր ձիերը. կառքը 5 վայրկեանէն հասաւ Աւստրիական նամակատունը որին շարունակ կը հետեւէր ժողովուրդը. աղմուկը կը շարունակուէր, մինչ թիւրք մը, հասնելով ատրճանակը ու սուրը կուզէր դիմադրել այդ խուժանին, կուսակալը բարկանալով սկսաւ հետեւել խօսքերը արտասանել, ձեռքեցէք նայինք ասոնք ինչ կրնան ընել, եթէ ոչ թող հեռանան : Քիչ ատենէն ժողովուրդը հեռացաւ, և փոստան սկսաւ կրկին գործել :

Սուրիան դեռ շատ պէտք ունի քաղաքակրթութեան, զի նա դեռ շատ տկար է :

Պյէրուք ԶՈՒԼՈՒՄ

ԾԱՆՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » ի տպարանին մէջ, Շէրիֆ բաշայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին հետեւեալ պրօշիւրները :

Ա. ՊԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ « 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրօշիւրը թէև հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուններով զանց կը նենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար. գինն է մէկ ֆրանք :

Գինը Արշալոյսի իմ քաղաքութեանէն զատ Հեղինակին հասցէին որ է.

Mr. A. Balian

Le Caire

# ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պավաքի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՒԳԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 է աւելի վկայական եւ մեքայնեանով վարձատրուած, երաշխաւորեալ մեխանիկներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսին մէջ ստացած է . ՀԱՅԹԱՅԹԻՑ ԲՐՈՒՄԻՈՅ ՀԱՅԹԱՅԹԻՑ ԱՆԳՂԻՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՑ Ն. Ք. ԽՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐ յաւակնելիս

ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ

## ՕՐԹԸՆ ՏՐԱՊԻԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒԱ

Քանթօ, Սուգուլ Մանկաի

3 Թեթիֆիթ-Եր-Բալլաճի փողոց 3

Մանկաի Մզկիթին դէմը, Թիւ 3

Պանդոկապետ - Մ. Գէորգեան

— 0 —

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեղծողնը գտնուող և օգուտէտ դիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն :

Դիմեցէք անդամը և գոհ պիտի մնաք :

Դիմերը չափաւոր են . 28-55

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

Մեր արտասահմանի և եթովպիոյ բաժանորդներէն կը խնդրուի որ հաճին փութացնել իրենց բաժնեկիցներըն, նկատելով որ տարւոյն իննբորդամիսը կը թեւակոխենք :

Այսպէսով մեր յարգելի բաժանորդները մեզի խնայած կը լինան մասնաւոր գիմուններու առթիւ ըլլալիք ծախքերէն և ժամավաճառութիւններէ :

## ՍԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեխանիկներու, ֆոֆօկրաֆներու եւ կազի վառարաններու :

Տասներկու տարին « Սինկըր » ընկերութեան քով մեքենայարդարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Զախարիա Գոնտանթիոնի քով պաշտօնեայ է զէնքերու եւ մեքենայարդարման ճիւղին մէջ :

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի տրամադրէ կարի մեքենաներու, ֆօֆօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց եւ յարդարման :

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու՝ կրնան դիմել իր սունը Շարէ Մուհամէտ Ալի Թահթէլ Ռապէհ կրնան հարցնել նաեւ Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, եւ դարձեալ դիւրութեան համար քարթ բոստալով մը կրնան դիմել « Արշալոյս » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, Փողոցին անունը եւ Տունին թիւը :

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ եւ փորձեր կատարուելէ յետոյ :

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ :